

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎԱՆՈՒՄ	Հանքարդյունաբերական ոլորտի թարգմանիչ
ՎԵՐԱԴԱՍ	Հանքի շահագործման պատասխանատու
ԺԱՄԿԵՏ	
ՎԱՅՐԸ	Ամուլսար, Վայոց Ձոր, Հայաստանի Հանրապետություն
ԱՍՏԻՃԱՆ	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովել հանքի շահագործման հետ կապված տեխնիկական փաստաթղթերի ու այլ ուսումնական նյութերի գրավոր, ինչպես նաև շփումների ընթացքում բանավոր թարգմանություն անցկերեն ու հայերեն լեզուներով: Հանքի շահագործման բաժնի թարգմանիչը պետք է աշխատի բացահանքի պայմաններում և ֆիզիկապես ունակ լինի աշխատելու տարբեր բարձրությունների վրա: Աշխատանքը ներառում է ինչպես գրասենյակային պայմաններում կատարվող տեխնիկական բնույթի գրավոր թարգմանություններ, այնպես էլ տարբեր եղանակային ու դաշտային պայմաններում բանավոր թարգմանություններ: Տվյալ պաշտոնի համար սահմանվում է 12-ժամյա աշխատանքային հերթափոխ՝ 7:00 – 19:00: Հերթափոխի ընթացքում աշխատողները կտեղակայվեն ճամբարում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Գտնել թարգմանվող արտահայտությունների և եզրույթների ճշգրիտ համարժեքները
- Կազմել համապատասխան տեխնիկական եզրույթների ու արտահայտությունների բառարան և/կամ տվյալների բազա հետագա թարգմանությունների նպատակով
- Առնվազն երկու, այն է՝ անգլերեն և հայերեն լեզուների, բանավոր և գրավոր խոսքի լիարժեք տիրապետում և ազատ հաղորդակցվելու ունակություն
- Բնագիր լեզվի ոճի և երանգավորման ճիշտ փոխանցում
- Աշխատանքային ժամանակացույցի և սահմանված ժամկետների պահպանում
- Բանավոր խոսքի ճշգրիտ, ամբողջական, հստակ ու հասկանալի թարգմանություն:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Մայրենի լեզվի և անգլերեն լեզվի լիարժեք տիրապետում
- Գրավոր և բանավոր հաղորդակցվելու գերազանց ունակություններ
- Համակարգչային ծրագրերի բավարար իմացություն, ինչպես նաև գրավոր և բանավոր թարգմանչական ծրագրերի ու հնարքների տիրապետում
- Կազմակերպվածություն և բժախնդրություն
- Մի քանի առաջադրանք միաժամանակ կատարելու և սահմանված ժամկետները պահպանելու ունակություն
- Բանավոր և/կամ գրավոր լեզվի կամ հարակից ոլորտում բարձրագույն կրթություն /ցանկալի է/
- Առնվազն 5 տարվա թարգմանչական փորձ հանքարդյունաբերության ոլորտում
- Հանքարդյունաբերության կամ համապատասխան ոլորտում բարձրագույն կրթություն /ցանկալի է/

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Բոլոր շահագրգիռ թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները hr@lydianinternational.co.uk հասցեին՝ նշելով պաշտոնի անվանումը հաղորդագրության անվանման մեջ: Հարցազրույցի կիրավիրվեն միայն նախնական փուլն անցած թեկնածուները:

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ

07 փետրվարի 2018թ.